



Co-funded by the  
European Union



«ՄԿՈՒ հաստատությանը կից ՍՄԱԲՏ ֆերամայի մոդել՝ ուսանողների աշխատանքի վրա հիմնված ուսումնաստության և շրջանավարտների բարձր աշխատունակության համար» նախագիծ

## Փաստահավաք գեկույց

*Այս նախագիծը համաֆինանսավորվել է Եվրոպական հանձնաժողովի կողմից: Սույն փաստաթուղթը պարունակում է միայն հեղինակների տեսակետները, ուստի Եվրոպական հանձնաժողովը չի կարող պատասխանատվություն կրել դրա օգտագործման համար:*

ԵՐԵՎԱՆ – ՍՏԵՓԱՆԱՎԱՆ 2024

## 1. Ակնարկ Հայաստանում գյուղատնտեսության վերաբերյալ

### 1.1. Գյուղատնտեսություն և գյուղական բնակչություն

Գյուղատնտեսությունը Հայաստանի կարևորագույն տնտեսական ճյուղերից է: Այն գյուղական բնակավայրերի տնտեսական ակտիվության հիմնական աղբյուրն է և զգալի ներդրում ունի համախառն ներքին արդյունքի մեջ:

Գյուղատնտեսությունը արտադրում է համախառն ներքին արդյունքի /ՀՆԱ / 13,7 տոկոսը 2018թ դրությամբ և գյուղատնտեսությամբ զբաղված է աշխատող բնակչության մոտ 24,8 տոկոսը, որի 52,1 տոկոսը կին ֆերմերներ են<sup>1</sup>:

2023 թ. Հայաստանում գյուղական բնակչության թիվը կազմել է 1075,6 հազ. մարդ, որը կազմում է ընդհանուր բնակչության 36% -ը<sup>2</sup>:

Հայաստանի գյուղական բնակչության մեկ երրորդից փոքր-ինչ ավելին բնակվում է Արարատի և Արմավիրի մարզերում, որոնք զբաղեցնում են բերրի Արարատյան դաշտավայրի մեծ մասը: Լոռու մարզի գյուղական բնակչությունը կազմում է 39%, ինչը պայմանավորված է տարածաշրջանի գյուղատնտեսությամբ զբաղվելու բարենպաստ բնակլիմայական գործոններով:

Քանի, որ 2011թ – ից հետո մարդահամար չի եղել ներկայացնում ենք 2011թ տվյալները:

2011 թ. մարդահամարի տվյալներով Հայաստանում զբաղված բնակչության (1,057,735 մարդ) շուրջ 37%-ը (390,248 մարդ) որպես զբաղմունք նշել է գյուղատնտեսությունը, անտառային տնտեսությունը և ձկնորսությունը: Այս ոլորտներում զբաղված է 194,081 տղամարդ և 196,167 կին: Աշխատող տղամարդկանց 33%-ը և աշխատող կանանց գրեթե 42%-ը զբաղված է հենց գյուղատնտեսության ոլորտում: Այս ոլորտում գրեթե բոլորը ինքնազբաղված են կամ ընտանիքի անդամ-աշխատողներ են<sup>3</sup>:

Գյուղատնտեսության ոլորտում զբաղվածների 89%-ն ապրում է գյուղական բնակավայրերում, 11%-ը քաղաքաբնակ է: Գյուղատնտեսության մեջ ներգրավված է

<sup>1</sup> <https://www.armstat.am/en/?nid=12&id=11003&submit=Search%20/>

<sup>2</sup> <https://mineconomy.am/page/1467>

<sup>3</sup> <https://www.armstat.am/am/?nid=209>

գյուղական բնակավայրերում աշխատող բնակչության ավելի քան 70%-ը, քաղաքներում այս ցուցանիշը մոտ 8% է<sup>4</sup>:

Հայաստանի հինգ մարզերում (Գեղարքունիք, Արագածոտն, Արմավիր, Արարատ և Վայոց ձոր) զբաղված բնակչության ավելի քան 50%-ը ներգրավված է գյուղատնտեսության ոլորտում: Երեք հյուսիսային մարզերում (Տավուշ, Լոռի և Ծիրակ) այս ցուցանիշը 45-50% է: Սյունիքում բնակչության միայն մեկ երրորդն է զբաղված գյուղատնտեսության ոլորտում, Կոտայքում՝ 28%-ը:

Մարզերի մեծ մասում գյուղատնտեսության ոլորտում զբաղված է գյուղական բնակչության ավելի քան 70%-ը, Սյունիքում և Տավուշում՝ ավելի քան 60%-ը, Կոտայքում՝ միայն 44%-ը<sup>5</sup>:

ՀՀ գյուղատնտեսության ոլորտի տնտեսական զարգացումն ապահովող հիմնական ուղղությունների 2020-2030 թթ տեսլականն է զարգացող, նորարարական, բարձր ավելացված արժեք ստեղծող, բնական պաշարների նկատմամբ հոգատար և շրջակա միջավայրի հետ ներդաշնակ, էկոլոգիապես մաքուր արտադրանք ստեղծող և գյուղում բնակվող մարդու բարեկեցությունը երաշխավորող գյուղատնտեսությունը<sup>6</sup>:

## 1.2. Տեղը տնտեսության մեջ

Մարզի գյուղատնտեսական նշանակության հողերը

Լոռու մարզի գյուղատնտեսական նշանակության հողերը 2023 թվականին հուլիսի 1-ի դրությամբ կազմում են 250904.3 հա, որը կազմում է մարզի ընդհանուր տարածքի 66%-ը: Դրանցից մեծ կշիռ ունեն արոտավայրերը (145618.3 հա կամ 58%), իսկ գյուղատնտեսական նշանակության հողերի 16.8%-ը (42.001.7 հա) վարելահողեր են: Բնակավայրերի հողերը կազմում են 16503.2 հա, բնության հատուկ պահպանվող տարածքների հողերը՝ 2404.3 հա, ջրային հողերը՝ 2606.6 հա, անտառային հողերը՝ 100.603.0 հա: Լոռու մարզում ոռոգելի հողատարածքները կազմում են 9612.1 հա (22.8%), որոնք հիմնականում գտնվում են Սպիտակի, Ստեփանավանի և Թումանյանի տարածաշրջաններում:

Առանձնահատուկ ուշադրության է արժանի բարելավման կարիք ունեցող հողերի ցուցանիշը: ՀՀ վիճակագրական կոմիտեի տվյալներով՝ 2023 թվականի դրությամբ Լոռու մարզում բարեկարգման կարիք ունեցող հողերի ծավալը կազմում է 7674.5 հա, որը

<sup>4</sup> <https://evnreport.com/arm/magazine-issues/agriculture-in-armenia-an-overview-2/>

<sup>5</sup> [https://www.armstat.am/am/?nid=209\\_99549298.xls](https://www.armstat.am/am/?nid=209_99549298.xls)

<sup>6</sup> <https://mineconomy.am/page/1467>

կազմում է Հայաստանի ընդհանուր մակերեսի 2%-ը: Ի դեպ, այս ցուցանիշը 2019 թվականին կտրուկ աճել է՝ 980 հա-ից հասնելով 7808,2 հա-ի:

Շրջանի տարածքում գերակշռում են անտառային, լեռնատափաստանային, ենթալպյան մարգագետինները: Պետական անտառային ֆոնդը կազմում է 101279,6 հա, որից 85799,6 հա անտառածածկ է<sup>7</sup>:

Երեք հյուսիսային մարզերը (Շիրակ, Լոռի և Տավուշ) արտադրել են գյուղատնտեսական արտադրանքի 23%-ը, երկու կենտրոնական մարզերը (Արագածոտն և Կոտայք)՝ 18%-ը, Գեղարքունիքը, որը զբաղեցնում է Սևանա լճի ավազանը՝ 13%-ը: Երևանում արտադրվել է երկրի ընդհանուր գյուղատնտեսական արտադրանքի 1%-ը:

Ըստ Համաշխարհային բանկի տվյալների՝ Հայաստանում գյուղատնտեսական նշանակության հողերը կազմում են 2042, 080 հա, որը երկրի ամբողջ հողատարածքի 59%-ն է: Ընդ որում, վարելահողերը կազմում են շուրջ 442,73,0 հա, որը կազմում է Հայաստանի հողատարածքի մոտ 15.4%-ը:

Անասնաբուծության և այգեգործության մասնաբաժինը Հայաստանի գյուղատնտեսական արտադրանքում համապատասխանաբար 52% և 48% է:

ՀՀ Լոռու մարզը մասնագիտացած է կաթնատու տավարաբուծության ուղղությամբ: Վերջին տարիների միջին տվյալներով խոշոր եղջերավոր անասունների և խոզերի գլխաքանակը հանրապետությունում կազմել է համապատասխանաբար 12.3% և 8.13%, իսկ մսի իրացումը և կաթի արտադրությունը՝ 11.7% և 12.7%: Մարզում նկատվում է ինչպես գյուղատնտեսական կենդանիների գլխաքանակի, այնպես էլ անասնաբուծական մթերքների արտադրության աճ<sup>8</sup>:

## 1.2. Գյուղատնտեսության դերը երկրի տնտեսության մեջ

ՀՀ-ում գյուղատնտեսությունը հասարակության կեցության հիմքն է, որի որակից և զարգացման մակարդակից է կախված բնակչության պարենային անվտանգությունը, գյուղական բնակավայրերի կենսամակարդակը ու զարգացման հնարավորությունները, մարդկանց առողջությունը ու անվտանգությունը:

<sup>7</sup> <http://ori.mtad.am/files/docs/64556.pdf>

<sup>8</sup> <https://evnreport.com/arm/magazine-issues/agriculture-in-armenia-an-overview-2/>

Գյուղատնտեսությունը երկրի տնտեսության առանցքային ոլորտներից մեկն է, որը ապահովում է ՀՆԱ-ի 10,4%-ը (2022թվականի տվյալներով): Գյուղատնտեսության համախառն արտադրանքի 94,2 %-ն ապահովում են շուրջ 317 հազար գյուղացիական տնտեսություններ, որոնցից յուրաքանչյուրին միջինը բաժին է ընկնում շուրջ 1,48 հա հողատարածք:

Գյուղատնտեսության համախառն արտադրանքի դինամիկան ըստ առաանձին ճյուղերի հետևյալն է.

Ճյուղերը	2021	2022
Անասնաբուծություն	463,5 մլրդ դրամ	502,5 մլրդ դրամ
Բուսաբուծություն	469,4 մլրդ դրամ	518,7 մլրդ դրամ

Գյուղատնտեսության, անտառային տնտեսության և ձկնորսության մասնաբաժինը Հայաստանի ՀՆԱ կառուցվածքում 2012 թվականից հետևողականորեն նվազում է. երկրի համախառն ներքին արդյունքի 18.4%-ից այս ցուցանիշը 2022 թվականին նվազել է մինչև 10,4%<sup>9</sup>:

Տնտեսության կառուցվածքում վերջին տասնամյակում նվազել է նաև գյուղատնտեսական արտադրանքի մասնաբաժինը: Գյուղատնտեսությունը, անտառային տնտեսությունն ու ձկնորսությունը 2022-ին գեներացրել են \$1.6 մլրդ: Գյուղատնտեսական գործունեությունը տարածված է Հայաստանի ամբողջ տարածքում, թեև Արարատյան դաշտավայրը հատուկ նշանակություն ունի: 2024 թ. Հայաստանի գյուղատնտեսական արտադրանքի 36%-ը ստացվել է Արարատի և Արմավիրի մարզերից: Ըստ 2014 թ. գյուղատնտեսական հաշվառման՝ Հայաստանի 317,000 ընտանեկան ֆերմաների 54%-ը հող է մշակում և զբաղված է անասնաբուծությամբ, 42%-ը միայն հող է մշակում, 4%-ը զբաղված է միայն անասնաբուծությամբ: Մարզերի միջև այս առումով զգալի տարբերություն կա: Կոտայքում հողի մշակմամբ զբաղվում է 53%-ը, Վայոց ձորում՝ միայն 24%-ը<sup>10</sup>:

## Դաշտավարություն

<sup>9</sup> <https://mineconomy.am/page/1326>

<sup>10</sup> <https://evnreport.com/arm/magazine-issues/agriculture-in-armenia-an-overview-2/>

Հայաստանի գյուղատնտեսական նշանակության հողերը (ընդհանուր առմամբ 513,000 հեկտար) բաժանված են 345,875 ընտանեկան ֆերմաների միջև: Տարբերությունը այս և վերոնշյալ թվերի կայանում է նրանում, որ 317,000 տալիս են արտադրանք իսկ մնացածը՝ չեն օգտագործվում: Բոլոր ընտանեկան ֆերմաների շուրջ 60%-ն ունի 1 հեկտարից էլ պակաս հողատարածք: 35%-ի դեպքում տարածքը 1-5 հեկտար է, և միայն 5%-ի դեպքում է տարածքը գերազանցում 5 հեկտարը:

Ըստ ՄԱԿ-ի Պարենի և գյուղատնտեսության կազմակերպության՝ այս հողերի մոտ 116,170 հա ոռոգվող են: Ըստ 2023 թ. գյուղատնտեսական հաշվառման՝ մշակվող հողերի գրեթե կեսը (49%) ոռոգվում է հիմնական ցանցի միջոցով: Ծուրջ 21%-ը հողատարածքը ոռոգելու համար օգտվում է խմելու ջրից, 15%-ը՝ գետերի ու լճերի, իսկ 12%-ը՝ ջրհորների ջրից: Արարատում 31%-ն օգտվում է խորքային ջրհորներից:

Օրգանական գյուղատնտեսության համար օգտագործվող հողերը շուրջ 1,430 հեկտար են, որից 730 հեկտարը հավաստագրված օրգանական է: 2019 թ. տվյալներով՝ հացահատիկային մշակաբույսերը զբաղեցնում են 121,179 հեկտար, մրգի և հատապտուղների այգիները՝ 43,411 հեկտար, բանջարեղենը (բացի կարտոֆիլից)՝ 20,616 հեկտար, կարտոֆիլի դաշտերը՝ 20,477 հեկտար տարածք: Խաղողի այգիները զբաղեցնում են 16,497 հեկտար, սեխի դաշտերը՝ 4,257 հեկտար:

Արարատի ու Արմավիրի մարզերում (որոնք զբաղեցնում են Արարատյան դաշտավայրի մեծ մասը) կենտրոնացված է Հայաստանի մրգատու այգիների շուրջ 43%-ը, բանջարեղենի դաշտերի (բացի կարտոֆիլից) ավելի քան 63%-ը, խաղողի այգիների շուրջ 73%-ը, ձմերուկի և սեխի դաշտերի գրեթե 95%-ը:

Հայաստանում հացահատիկի մշակման ավելի քան 70%-ը բաշխված է հետևյալ կերպ՝ Ծիրակ՝ 27.7%, Գեղարքունիք՝ 18.8%, Արագածոտն՝ 13.7%, Սյունիք՝ 11%: Հայաստանի կարտոֆիլի դաշտերի ավելի քան 70%-ը կենտրոնացած է երեք մարզերում՝ Գեղարքունիք (39.5%), Լոռի (16.8%) և Ծիրակ (15.8%):

Արագածոտնի, Տավուշի և Վայոց ձորի մարզերում է Հայաստանի խաղողի այգիների 24%-ը: Սյունի մարզերում խաղողագործությունը չնչին տարածքներ է զբաղեցնում: Ծիրակում և Գեղարքունիքում նման նշանակության հողեր չկան<sup>11</sup>:

## **Անասնապահություն և ապրանքների արտադրություն**

<sup>11</sup> <https://evnreport.com/arm/magazine-issues/agriculture-in-armenia-an-overview-2/>

Գյուղատնտեսության այս ճյուղը Հայաստանում զբաղվում է հիմնականում, խոշոր եղջերավոր անասունների, ոչխարների, ընտանի թռչունների և մեղուների բուծմամբ:

Անասնաբուծության տեսանկյունից առաջատար մարզերն են Գեղարքունիքը (97,000 գլուխ), Ծիրակը (87,000), Լոռին (73,000) և Արագածոտնը (68,000): Ընտանեկան ֆերմաների 82%-ում պահվում է 9-ից ոչ ավելի խոշոր եղջերավոր անասուն, 17%-ում՝ 10-49 գլուխ, և միայն 1%-ում՝ 50 գլխից ավելի:

Վերջին տարիներին Հայաստանում խոզերի գլխաքանակը տատանվել է 223,300-ի սահմաններում: Գլխաքանակը համեմատաբար հավասար է տեղաբաշխված Հայաստանի մարզերում. առաջին տեղում Արմավիրն է՝ 29,400 գլուխ խոզ, վերջինում Լոռին՝ 15,300:

Վերջին տասնամյակում ոչխարների և այծերի գլխաքանակը (միասին վերցրած) Հայաստանում կազմել է 778,000 գլուխ: Ոչխարաբուծական առաջատար մարզերն են Արմավիրը (114,000), Սյունիքը (108,300), Արագածոտնը (91,400), Գեղարքունիքը (91,000) և Արարատը (87,900):

2022 թվականին կաթի արտադրությունը կազմել է 623,1 հազար տոննա, միսինը՝ 103,2 հազար տոննա:

Ամենաշատ կաթ արտադրող մարզերն են Գեղարքունիքը (18%), Ծիրակը (15%), Լոռին (12%) և Արագածոտնը (12%)<sup>12</sup>:

### 1.3. Խնդիրները

Ոլորտի զարգացման 2020-2030 թթ. ռազմավարական ծրագրում առանձնացված են հետևյալ խնդիրները՝ «ցածր արդյունավետություն, սննդի անվտանգության չափանիշների ոչ բավարար մշտադիտարկում, շուկայի բարձր կենտրոնացում, թույլ ինստիտուցիոնալ ներուժ և նորարարությունների սահմանափակ օգտագործում»: Խնդիրները լուծելու ուղղությամբ կառավարությունն առաջարկում է զարգացման որոշակի սկզբունքներ՝ «կուտակում, շահութաբերության ապահովում, երիտասարդության ներգրավվածություն, դիվերսիֆիկացիա և ռիսկերի կառավարում, հարմարեցում կլիմային և տեխնոլոգիական արդիականացում»:

<sup>12</sup> <https://evnreport.com/arm/magazine-issues/agriculture-in-armenia-an-overview-2/>

Խնդիրների հաղթահարման համար գյուղատնտեսության ոլորտում միջնաժամկետ ժամանակահատվածում պետական քաղաքականությունը նպատակաուղղված է.

- գյուղատնտեսության ինտենսիվացման մակարդակի բարձրացում և առաջադեմ, նորարարական տեխնոլոգիաների ներդրում
- գյուղատնտեսական նշանակության հողերի նպատակային և արդյունավետ օգտագործում, չօգտագործված հողերի շրջանառության մեջ դնելը և հողերի խոշորացումը
- Ոռոգման և ջրօգտագործման արդյունավետության բարձրացում
- Բուսաբուծության համապարփակ ապահովագրության ներդրում
- Գյուղատնտեսության ոլորտում ֆերմերների համար ֆինանսական միջոցների տրամադրում.
- գյուղատնտեսական տեխնիկայի արդիականացում
- բարձրարժեք մշակաբույսերի արտադրության խթանում և ինտենսիվ այգեգործության զարգացում
- ջերմոցների օգտագործման ընդլայնում
- տեղական սերմարտադրության խթանում
- անասնաբուծության ոլորտում առաջադեմ տեխնոլոգիաների ներդրում, տոհմային անասնաբուծության զարգացում.

Գյուղատնտեսության ոլորտի հնարավորությունները ներկայացված են աղյուսակ 1 -ում:

Աղյուսակ 1. Հնարավորությունները գյուղատնտեսության ոլորտում

ինքնաբավություն		
Ցածր / չի բավարարում /	Միջին /բավարարում է մասամբ/	Բարձր / բավարարում /
ցորեն եգիպտացորեն թռչնամիս խոզի միս	տավարի միս կաթ	Կարտոֆիլ, բանջարեղեն Հատապտուղներ, խաղող ոչխարի միս, ձու, ձուկ

Ինքնաբավությունը երկրի պարենային անվտանգության մակարդակը գնահատող ցուցանիշ է:

Դինամիկ զարգացող ենթաոլորտներն են՝ անասնապահությունը / կաթ և միս /, ջերմոցային տնտեսությունները, այգեգործական տնտեսությունը, ձկնաբուծությունը, օրգանական գյուղատնտեսությունը, խաղողագործությունը և գինեգործությունը:

## **2. Գյուղատնտեսական մասնագիտությունների գծով ՄԿՈՒ կազմակերպման հիմնական պահանջները**

Որակավորումների ազգային շրջանակում ՄԿՈՒ-ն Հայաստանում զբաղեցնում է 3-5 մակարդակները (հավելված 1): Նախնական մասնագիտական կրթության և ուսուցման ոլորտն ունի երկու մակարդակ՝ նախնական մասնագիտական (արհեստագործական) կրթություն և միջին մասնագիտական կրթություն: Համակարգ կարելի է մուտք գործել հիմնական ընդհանուր (9-ամյա) և միջնակարգ (12-ամյա պարտադիր) ընդհանուր կրթության հիմքով (հավելված 2):

ՄԿՈՒ բովանդակությունը սահմանվում է պետական կրթական չափորոշիչներով, որոնք հաստատվում են Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության կողմից (ԿԳՄՄՆ): «Կրթության մասին» օրենքի համաձայն՝ կրթական պետական չափորոշիչը «նորմատիվ փաստաթուղթ է, որը սահմանում է կրթական ծրագրերի պարտադիր նվազագույն բովանդակությունը, սովորողների առավելագույն ուսումնական ծանրաբեռնվածությունը և շրջանավարտների նկատմամբ որակական պահանջները»:

Չափորոշիչների և ուսումնական ծրագրերի մշակման համար ԿԳՄՄ նախարարի հրամանով ստեղծվում են աշխատանքային խմբեր, որտեղ ներգրավված են (պայմանագրային հիմունքներով) ներկայացուցիչներ տարբեր ուսումնական հաստատություններից և աշխատաշուկայից: Աշխատանքային խմբի ձևավորման կանոնակարգը հաստատվում է ԿԳՄՄՆ-ի կողմից, և սահմանում է խմբի անդամների թիվը, նրանց առաջադրման կարգը, դեկավարի պարտականությունները և հարակից վարչական հարցերը:

Հայաստանում մասնագիտական կրթության մասնագիտությունների և որակավորումների կարողութենամետ պետական կրթական չափորոշիչների մշակման և ներդրման հայեցակարգը նշում է, որ չափորոշիչի նպատակն է պահանջներ սահմանել կրթության վերջնարդյունքի նկատմամբ, այսինքն՝ շրջանավարտների իրավասությունների

ձևավորում, որոնք կհամապատասխանեն տեղական և միջազգային աշխատաշուկաների պահանջներին՝ հաշվի առնելով նրանց ներկայիս կարիքները և ապագա զարգացումները:

Հայեցակարգով սահմանվում են ՊԿԶ-ների մշակման և ներդրման հետևյալ սկզբունքները.

- միտված է ժամանակակից մարդու և քաղաքացու ձևավորմանը, աշխատուժի վերարտադրությանն ու զարգացմանը, աշխատաշուկայում նրա մրցունակությանը,
- բովանդակության համապատասխանությունը տնտեսության և աշխատաշուկայի պահանջներին,
- ուսումնական (ուսումնառության) գործընթացների շարունակականություն,
- ինտեգրում միջազգային կրթական համակարգին,
- համագործակցություն սոցիալական գործընկերների հետ,
- չափորոշիչների համակարգված վերանայում աշխատաշուկայի և կրթական համակարգի զարգացումներին համահունչ,
- ստանդարտների մշակման և վերանայման գործընթացների ամբողջականությունը,
- շրջանավարտների ձեռքբերումների համապատասխանությունը չափորոշիչների և սահմանված չափանիշների պահանջներին օբյեկտիվորեն գնահատելու հնարավորություն,
- կառուցվածքի և չափորոշիչների բովանդակության նկունություն:

Հայաստանում չկա որակավորման կամ զբաղմունքի չափորոշիչ, որը կհստակեցնի որոշակի աշխատավայրում մասնագետին ներկայացվող պահանջները, ինչպես նաև հիմք կհանդիսանա պետական կրթական չափորոշիչների մշակման համար: Հետևաբար, վերջինիս մշակման համար սովորաբար իրականացվում է նախ որակավորման նկարագրության ձևավորում: Որակավորման նկարագրերը մշակվում են նույն աշխատանքային խմբի անդամների կողմից, որոնք այնուհետև մշակելու են պետական կրթական չափորոշիչը, ինչի համար կիրառվում է մասնագիտական վերլուծության համար օգտագործվող մեթոդաբանությունը: Հարկ է նաև նշել, որ այս փաստաթղթի կառուցվածքը որևէ իրավական ակտով հաստատված չէ, ավելին, որակավորման նկարագրերը ենթակա չեն հաստատման և չեն հանդիսանում ՊԿԶ-ի պաշտոնական մաս: Այսպիսով, նկարագրերը

օգտագործվում են գուտ որպես մեթոդաբանական (աշխատանքային) գործիք ՊԿՉ-ների մշակման համար: Այնուամենայնիվ, դրանք հրապարակվում են Մասնագիտական կրթության և ուսուցման զարգացման ազգային կենտրոնի (ՄԿՈԲԶԱԿ, որը պատասխանատու է ՊԿՉ-ների մշակման գործընթացի կազմակերպման համար) պաշտոնական կայքէջում՝ ՊԿՉ-ների և մոդուլային ուսումնական ծրագրերի հետ միասին:

Կրթության պետական չափորոշիչները (հավելված 3-ում տրված է «Անասնաբուժություն» մասնագիտության համար) մշակվել և հաստատվել են Կառավարության կողմից ընդունված կանոնակարգի համաձայն և մշակվել են ԿԳՄՄՆ-ի կողմից սահմանված այդ չափորոշիչների բաղադրիչներին համահունչ: Վերջինս նախատեսում է չափորոշիչի հետևյալ կառուցվածքը.

- Որակավորման ընդհանուր բնութագրերը.
- Շրջանավարտների մասնագիտական գործունեության բնութագրերը.
- Ընդհանուր պահանջներ մասնագիտության հիմնական կրթական ծրագրին.
- Որակավորման հիմնական կրթական ծրագրի բովանդակության պարտադիր նվազագույնի նկատմամբ պահանջներ.
- Կրթական գործընթացի իրականացման պայմաններին ներկայացվող պահանջները.
- Որակավորման օրինակելի ուսումնական պլան (վերապատրաստման պլան) և բացատրական նշումներ.

Նախքան ԿԳՄՄ նախարարի հաստատմանը ներկայացնելը, բոլոր նախագծերը ենթակա են փորձաքննության (տեխնիկական) և վավերացման համապատասխան ոլորտային հանձնաժողովների կողմից:

ՄԿՈԲ մասնագիտությունների ցանկում որևէ նոր որակավորում (մասնագիտություն) ավելացնելուց առաջ պետք է մշակվի և հաստատվի համապատասխան պետական կրթական չափորոշիչը:

Յուրաքանչյուր չափորոշիչի հետ կապված օրինակելի մոդուլային ուսումնական ծրագրերը (հավելված 4-ում տրված է «Անասնաբուժություն» մասնագիտության համար) նույնպես մշակվել են ՄԿՈԲԶԱԿ-ի կողմից և տրամադրվել ՄԿՈԲ\* հաստատությանը: Վերջիններս, սակայն, լիովին ազատ են օգտագործելու կամ հարմարեցնելու այն ուսումնական ծրագրերը, որոնք համարվում են միայն որպես առաջարկվող օժանդակ փաստաթուղթ: Հաստատությունները նույնպես ազատ են ուսուցման եղանակների և

մեթոդների ընտրության հարցում, սակայն նրանց պարտավորությունն է ապահովել ստանդներով սահմանված ուսումնառության արդյունքների լիարժեք իրականացումը:

2024թ. ընդունված «Մասնագիտական կրթության մասին ՀՀ օրենքը» պետական/կրթական չափորոշիչների փոխարեն սահմանում է ոլորտային որակավորումների շրջանակ, իսկ յուրաքանչյուր մակարդակի կրթական ծրագրի և որակավորման համար կրթության պետական կառավարման լիազոր մարմինը կազմում և հաստատում է կրթական ծրագրի նկարագիր:

Մասնավորապես, մասնագիտական կրթական ծրագրերը կազմվում են որակավորումների ազգային շրջանակի, ոլորտային որակավորումների շրջանակի և կրթական ծրագրի նկարագրի պահանջներին համապատասխան<sup>13</sup>:

Ոլորտային որակավորումների շրջանակը սահմանվում է որպես «որակավորումների ազգային շրջանակին համապատասխան՝ որոշակի ոլորտում կրթական մակարդակի համար ուսումնառության վերջնարդյունքները սահմանող որակավորումների խումբ (ցանկ, ամբողջություն)»<sup>14</sup>

Յուրաքանչյուր մակարդակի կրթական ծրագրի և որակավորման համար կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունը յուրաքանչյուր կրթական ծրագրի համար սահմանում է նկարագիր, որը ներառում է ծրագրին ներկայացվող հետևյալ ընդհանուր պահանջները<sup>15</sup>.

1. կրթական ծրագրի և որակավորման նպատակը, խնդիրները և ուսումնառության ակնկալվող վերջնարդյունքները.
2. կրթական ծրագրին և որակավորմանը ներկայացվող մուտքային և ելքային (ներառյալ՝ պետական ամփոփիչ ստուգման ձևերը և պարբերականությունը) պահանջները.
3. ուսանողի ուսումնական բեռնվածության ընդհանուր ծավալը՝ արտահայտված կրեդիտներով և ուսումնառության նվազագույն տևողությունը.

<sup>13</sup> ՀՀ օրենքը մասնագիտական կրթության մասին, հոդված 7:

<sup>14</sup> ՀՀ օրենքը մասնագիտական կրթության մասին, հոդված 3:

<sup>15</sup> ՀՀ օրենքը մասնագիտական կրթության մասին, հոդված 7:

4. ծրագրի բովանդակությունը՝ որակավորումն ապահովող դասընթացների կամ մոդուլների ցանկը և յուրաքանչյուր դասընթացին կամ մոդուլին հատկացված կրեդիտը.
5. որակավորման առանձնահատկություններով պայմանավորված համապատասխան գույքի և սարքավորումների նվազագույն պահանջները.
6. շնորհվող որակավորումը և հետագա մասնագիտական գործունեության հնարավոր ոլորտը:

### 3. Դասավանդումը և ուսումնառությունը ՄՊԳԲ-ում

#### 3.1. Ստեփանավանի պետական գյուղատնտեսական քոլեջի ընդհանուր բնութագիրը

Պաշտոնական անվանումը՝ «Ստեփանավանի պրոֆ. Ա. Քալանթարի անվան պետական գյուղատնտեսական քոլեջ» ՊՈԱԿ (ՄՊԳԲ)

Հասցեն(ները)՝	ՀՀ Լոռու մարզ, ք. Ստեփանավան, Երիտասարդական 47
Հեռախոս(ներ)՝	+374 256 2 22 80
Ֆաքս՝	+374 256 2 22 80
Էլեկտրոնային փոստի հասցե՝	<a href="mailto:college-step@rambler.ru">college-step@rambler.ru</a>
Կայք՝	<a href="http://www.stepcollege.am">www.stepcollege.am</a>
Տնօրեն՝	Արա Չոբանյան

Ստեփանավանի պետական գյուղատնտեսական քոլեջը հիմնադրվել է դեռևս 1929թ. և անվանվել Անասնաբուժական–անասնաբուժական տեխնիկում, իսկ 1995թ. վերակազմավորվեց որպես Գյուղատնտեսական քոլեջ :

Մինչև 1991թ. իր գործունեության ընթացքում քոլեջը տվել է հազարավոր շրջանավարտներ՝ տարբեր մասնագիտությունների գծով, որոնք հաջողությամբ աշխատել են նախկին ԽՍՀՄ-ի ագրոարդյունաբերական համալիրի տարբեր ոլորտներում: 1929-1991թթ. ընկած ժամանակաշրջանում քոլեջի բազմաթիվ մասնագետներ իրենց ավանդներն ներդրել Կովկասյան գորշ ցեղատեսակի ստացման գործում: Հայաստանի Հանրապետության անկախության առաջին իսկ օրվանից քոլեջը շարունակել է իր

բեղմնավոր գործունեությունը և, ելնելով պետության ռազմավարական զարգացման ուղղություններից, ինչպես նաև շուկայական տնտեսության պահանջներից, կադրեր է պատրաստում ագրարային ոլորտի ձեռնարկությունների համար:

**Տեսլականը** - Ստեփանավանի պետական գյուղատնտեսական քոլեջը երկրում և տարածաշրջանում ձգտում է դառնալ գյուղատնտեսության ոլորտի զարգացմանը նպաստող ուսումնական կենտրոն, որտեղ սովորողին հնարավորություն կտրվի ստանալ ժամանակակից պահանջներին բավարարող կրթություն և համապատասխանել ոլորտի պահանջներին՝ ունենալով բավարար հմտություններ և կարողություններ :

**Առաքելությունը** - քոլեջը նպատակ ունի կենտրոնացնել կրթական, կադրային և նյութական ներուժը՝ ապահովելով որակյալ կրթություն, և պատրաստել գյուղատնտեսության ոլորտի աշխատաշուկայի ժամանակակից պահանջները բավարարող ու դրանց դինամիկ փոփոխությունները հաշվի առնող միջին մասնագետներ:

**Արժեքները** - Ժողովրդավարություն և թափանցիկություն, համախոհություն, փոխվստահություն և փոխսատարում, պատասխանատվություն, պարկեշտություն և հանդուրժողականություն, հետևողականություն և հավատարմություն որդեգրած գաղափարներին, ստեղծագործականություն և նորարարություն, գերազանցություն և կատարելության, որակի անընդհատ բարելավում, մասնակցայնություն և համագործակցայնություն, գործունեության արդյունավետություն, գենդերային հավասարություն

Ներկայումս, հաշվի առնելով աշխատաշուկայի պահանջները, քոլեջում ուսուցանում են հետևյալ հիմնական մասնագիտությունները՝ առկա և հեռակա ձևերով.

1. «Անասնաբուժություն», որակավորումը՝ «Կրտսեր անասնաբույժ»
2. «Կաթի և կաթնամթերքի տեխնոլոգիա», որակավորումը՝ «Տեխնոլոգ կաթի և կաթնամթերքի արտադրության»
3. «Գյուղատնտեսական մեքենաների և սարքավորումների շահագործում և նորոգում», որակավորումը՝ «Տեխնիկ՝ գյուղատնտեսական մեքենաների և սարքավորումների շահագործում և նորոգում»

4. «Մենեջմենթ», որակավորումը՝ «Մենեջեր»
5. «Հաշվապահական հաշվառում», որակավորումը՝ «Հաշվապահ»
6. «Փոխադրումների կազմակերպումը և կառավարումը ավտոտրանսպորտում», որակավորումը՝ «Տեխնիկ-կարգավար՝ ավտոտրանսպորտում փոխադրման և կառավարման»
7. «Գյուղացիական/ֆերմերային տնտեսության կազմակերպում», որակավորումը՝ ֆերմերային տնտեսության կազմակերպիչ
8. «Զբոսաշրջություն», որակավորումը՝ մասնագետ զբոսաշրջության ծառայությունների

Քոլեջը համագործակցում է միջազգային մի շարք կառույցների հետ, մասնավորապես CARD-ի, ՌԶԳ-ի, GIZ –ի հետ:

Քոլեջը ներգրավված է որակի ինստիտուցիոնալ հավատարմագրման գործընթացում և անցել է մի քանի փուլեր: Հաշվի առնելով գործատուների պահանջները և շահերը՝ քոլեջը համագործակցում է նաև բազմաթիվ գործատուների հետ, որոնք իրենց մասնակցությունն են ունենում ուսումնական պլանների և առարկայական ծրագրերի մշակմանը և իրականացնում են ուսումնական և արտադրական պրակտիկաների անցկացումը: Քոլեջը հաջողությամբ համագործակցում է նաև մի շարք հասարակական կազմակերպությունների՝ մասնավորապես «Բիզնես և կրթություն» և «Հայկական Կարիտաս» ՀԿ-ների հետ, և վերջինիս դրամաշնորհով քոլեջում կառուցվում է ջերմոցային 170մ<sup>2</sup> տարածքով տնտեսություն:

2022թվականից քոլեջը ներառվել է «ՄԱՎԵՏԱ» ծրագրում, որի շնորհիվ քոլեջում 2023-2024 ուստարվանից իրականացվում աշխատանքի վրա հիմնված ուսուցում, սակայն էրազմուս+ ծրագրի վերջնարդյունքում երեք մասնագիտություններով՝ «Անասնաբուժություն», «Կաթի և կաթնամթերքի տեխնոլոգիա» և «Մենեջմենթ», անցում ենք կատարելու ամբողջությամբ դուալ կրթական համակարգի:

Հաշվի առնելով քոլեջի շենքային պայմանները՝ քոլեջն ընդգրկվել է գյուղատնտեսական այն քոլեջների ցանկում, որոնց համար նախատեսված է կառուցել նոր ուսումնասարտարական շենքեր: Նախագծանախահաշվային փաստաթղթերն արդեն պատրաստ են, անցել են համապատասխան փորձաքննություն և հավանաբար հաջորդ տարի կսկսվեն շինարարական աշխատանքները: Իր ռազմավարական ծրագրին համապատասխան քոլեջը

նախատեսում է դառնալ տարածաշրջանային ոչ միայն կրթական, այլ նաև գիտական կենտրոն: Այս առումով նախատեսվում է ընդլայնել համագործակցության շրջանակները ոչ միայն տեղական կազմակերպությունների այլ նաև միջազգային և դոնոր կազմակերպությունների հետ:

### **3.2. «Էրագմուս+» ծրագրի ընտրված մասնագիտությունների գծով ուսումնառության կազմակերպումը**

Ներկայումս ուսանողների ընդհանուր թվաքանակը կազմում է 323: Ուսանողների վերջին 3 տարիների համակազմը ներկայացված է հավելված 5-ում: Բոլոր մասնագիտությունները արդիական և պահանջված են, որի մասին վկայում են վերջին երեք տարիների ընդունելության արդյունքները՝ թափուր տեղեր չեն մնում: 2023 թվականին ընտրված մասնագիտություններով քոլեջ են դիմել և ընդունվել 45 ուսանող, որից՝ :Ապագայում քոլեջը շարունակելու է գյուղատնտեսական նոր մասնագիտությունների ներդրման գործընթացը՝ ելնելով աշխատաշուկայի պահանջներից: Մասնավորապես, հաշվի առնելով սպանդանոցների պարտադիր լինելու հանգամանքը՝ նախատեսվում է ներդնել «Մսի և մսամթերքի տեխնոլոգիա» և «Ջերմատնային տնտեսության կազմակերպում» մասնագիտությունները, որոնց շրջանավարտների նկատմամբ արդեն իսկ աշխատաշուկայում կա պահանջարկ:

Ընտրված մասնագիտություններից երկուսի գծով՝ «Անասնաբուժություն» և «Կաթի և կաթնամթերքի տեխնոլոգիա» մասնագիտությունների ուսանողների ուսուցումն իրականացվում է ուսումնական և լաբորատոր ոչ այնքան բավարար պայմանների ապահովմամբ և խնդիր է դրված ծրագրի շրջանակում ապահովել նաև որոշակի գույքի և սարքավորումների ձեռքբերում, որը հնարավորություն կտա բարձրացնել կրթության որակը:

Քոլեջի շրջանավարտները աշխատում են տարածաշրջանի անասնաբուժական կենտրոններում, ֆերմերային տնտեսություններում և ագրոարդյունաբերական համալիրի տարբեր ձեռնարկություններում ու կազմակերպություններում:

Հատկապես անասնաբույժները մեծ պահանջարկ են վայելում, քանի որ բարձրագույն կրթությամբ անասնաբույժները հիմնականում չեն վերադառնում մարզեր:

Քոլեջի դասախոսները պարբերաբար վերապատրաստվում են և քոլեջում իրականացվում է նաև ֆերմերների խորհրդատվական ծառայություն՝ նպաստելով համայնքի ֆերմերների աշխատանքի արդյունավետության բարձրացմանը / Տարածաշրջանի ֆերմերները անհրաժեշտության դեպքում դիմում են քոլեջ և ստանում անվճար խորհրդատվություն համապատասխան մասնագետների կողմից /:

### **3.3. Դասավանդող անձնակազմը**

Քոլեջում աշխատում են հիմնականում բարձրագույն կրթությամբ և որոշակի արտադրական աշխատանքային փորձ ունեցող մասնագետներ ընդ որում ինչպես երկարամյա փորձ ունեցող այնպես էլ երիտասարդ կադրեր:

Քոլեջի դասախոսները պարբերաբար վերապատրաստվում են տարբեր ուղղություններով և տարբեր ծրագրերի շրջանակներում:

Կարևորվում է նաև քոլեջի ուսումնական գործընթացում տարբեր ոլորտների գործատու-մասնագետների ներգրավվածությունը, օրինակ՝ գործատուները ներգրավվում են տեսական ուսուցման գործընթացում իսկ քոլեջի դասախոսները իրենց հերթին մասնակցում են արտադրական գործընթացներին:

Աշխատավարձի ցածր կամարդակով պայմանավորված հատկապես «Անասնաբուժություն» մասնագիտության դասավանդողների կարիք այնուամենայնիվ գոյություն ունի

Քոլեջի դասավանդող անձնակազմի տվյալները արտացոլված են հավելված 6-ում:

### **3.4. ԱՀՈՒ գործող ձեկերը**

2019-2020թվականից քոլեջում «Անասնաբուժություն» և «Կաթի և կաթնամթերքի տեխնոլոգիա» մասնագիտություններով փորձարարական կարգով իրականացվում է աշխատանքի վրա հիմնված ուսուցում անցած 4 տարիների փորձը ցույց է տվել, որ ԱՀՈՒ ուսուցումը բավականին արդյունավետ է և շրջանավարտները ի տարբերություն ընդունված ուսուցման ձևերի ցուցաբերում են առավել բարձր կատարողական գիտելիքներ, սակայն

միաժամանակ փորձը ցույց է տալիս, որ տարածաշրջանի գործատուները՝ ֆերմերները նույնպես ունեն ինչպես վերապատրաստման այնպես էլ ժամանակակից նյութատեխնիկական բազայով ապահովվածության խնդիր:

Վերը նշվածը հաշվի առնելով քոլեջը 2022 թվականից ընդգրկվեց ՄԱՎԵՏԱ ծրագրում և 2023-2024 ուստարվանից վերոնշյալ երկու մասնագիտություններով անցում կատարվեց աշխատանքի վրա հիմնված ուսուցման կրթական ծրագրին, որի շրջանակում արդեն իսկ քոլեջի ուսանողների ուսուցումը կազմակերպվելու է քոլեջ-գործատու համագործակցության միջոցով:

Հաշվի առնելով, որ գործատուները ունեն նյութատեխնիկական բազայի նորացման խնդիր, ուստի կարևորվում է քոլեջին կից SMART ֆերմայի կառուցումը, որը հնարավորություն կտա, այն մոդուլների որոնց ուսուցումը հնարավոր չէ գործատուների մոտ կազմակերպել, կազմակերպել քոլեջին կից տնտեսությունում:

Մենեջմենթ մասնագիտության գծով ծրագրի շրջանակում նախատեսվում է անցում կատարել ԴՈՒԱԼ կրթական ուսուցման և դրանով մենք կունենանք շղթա արտադրության և իրացման:

### **3.5. ՄՊԳՔ կից ֆերմայի համար առկա պոտենցիալը**

Քոլեջը գտնվում է բնակլիմայական գործոններով բարենպաստ տարածաշրջանում և կարող է իր տարածքում իրականացնել որոշակի տնտեսական գործունեություն, քանի որ դրա համար առկա են ինչպես աշխատանքային այնպես էլ այլ գործոններ, մասնավորապես՝ քոլեջի ընդհանուր տարածքը կազմում է 46720ք.մ , որը հնարավորություն կտա ոչ միայն տեղակայել ֆերմայի ենթակառուցվածքները նախատեսված 25զուխ խեա-ի համար այլև ապահովել որոշակի կերարտադրություն, իսկ կերային բազայի մնացած մասը կլրացվի վարձակալական հողերի հաշվին:

Քոլեջի նոր մասնաշենքերի կառուցման պարագայում/որը նախատեսված է 2023-2024 թվականներին/ ներկայիս ուսումնական մասնաշենքերից մեկը կվերակառուցվի որպես կաթի վերամշակման փոքրիկ գործարանի և ծրագրով նախատեսվում է ժամանակակից մեքենաների և սարքավորումների ձեռքբերում գործարանի համար:

Արդյունքում քոլեջի գրեթե բոլոր մասնագիտությունների համար կատեղծվի ԴՈՒԱԼ կրթություն իրականացնելու հիմնարար բազա, օրինակ՝ կաթի արտադրություն, կերարտադրություն, կաթի վերամշակում, տեղափոխում, վաճառք:

Քոլեջի հողային տարածքի և շենքային պայմանների մասին տվյալները մանրամասն ներկայացված են հավելված 7-ում

#### **4. ՄԿՈՒ հաստատությունների կողմից ԱՀՈՒ իրականացման և ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվելու իրավական շրջանակը Հայաստանում**

Հայաստանում մասնագիտական կրթության և ուսուցումը (ՄԿՈՒ) կազմակերպվում է երկու մակարդակի՝ նախնական (արհեստագործական) և միջին մասնագիտական ծրագրերի միջոցով: Նախնական մասնագիտական կրթության իրականացվում է ուսումնարաններում, իսկ միջին մասնագիտականը՝ քոլեջներում: ՄԿՈՒ բոլոր հաստատությունները ունեն պետական ոչ առևտրային կազմակերպության կարգավիճակ:

Ներկայումս ՆՄԿՈՒ հաստատությունը կարող է ԱՀՈՒ նպատակով տնտեսական գործունեություն իրականացնել հիմնադրի որոշմամբ ուղղակիորեն նախատեսված դեպքերում և գործունեության տեսակներով<sup>16</sup> կամ առանձին առևտրային կազմակերպության հիմնադրման միջոցով: Համաձայն կառավարության բողոքի, պետական քոլեջներին թույլատրվել է իրականացնել ձեռնարկատիրական գործունեության հետևյալ տեսակները<sup>17</sup>.

- միջին մասնագիտական, նախնական մասնագիտական (արհեստագործական) կրթության, հանրակրթության,
- լրացուցիչ կրթության կազմակերպում.

<sup>16</sup> Հայաստանի հանրապետության օրենքը պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին: ՀՀ Ազգային ժողով, ՀՕ-248, հոդված 6:

<sup>17</sup> Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի հունիսի 20-ի «Հայաստանի Հանրապետության միջին մասնագիտական պետական ուսումնական հաստատությունները վերակազմակերպելու և Հայաստանի Հանրապետության միջին մասնագիտական պետական ուսումնական հաստատության օրինակելի կանոնադրությունը հաստատելու մասին» N 1009-Ն որոշում, հոդված 6:

- 2) արտադարձական դաստիարակության կազմակերպում.
- 3) նախապատրաստական դասընթացների կազմակերպում.
- մասնագիտական ուսուցման և այլ դասընթացների կազմակերպում.
- կադրերի վերապատրաստում, վերաորակավորում և որակավորման բարձրացում.
- ստեղծագործական, հետազոտական, փորձարարական և փորձագիտական գործունեության իրականացում.
- ուսումնաարտադրական, արտադրական գործունեություն և սպասարկման ծառայությունների իրականացում.
- ուսումնամեթոդական նյութերի, ձեռնարկների մշակում.
- կրթական, մշակութային, սոցիալական, մարզական և այլ բնույթի միջոցառումների կազմակերպում և (կամ) սպասարկում.
- հրատարակչական գործունեություն.
- քոլեջի ուսանողների և աշխատողների հանրային սննդի կազմակերպում.
- քոլեջի ուսանողների և աշխատողների համար հանրակացարանային ծառայությունների կազմակերպում.
- քոլեջի ուսանողների և աշխատողների հանգստի կազմակերպում.
- մշակութային գործունեության իրականացում»:

Գործունեության այս տեսակները արտացոլված են կառավարության որոշմամբ սահմանված միջին մասնագիտական պետական ուսումնական հաստատության օրինակելի կանոնադրության մեջ<sup>18</sup>: Ծահույթի օգտագործման կարգը սահմանում է հիմնադիրը, իսկ հարկերը, տուրքերն ու պարտադիր վճարները վճարվում են շահույթ չհետապնդող կազմակերպությունների համար նախատեսված կարգով և չափով<sup>19</sup>:

ՆՄԿՈՒ հաստատությունը այսպիսով հնարավորություն ունի ձեռնարկատիրական գործունեությունը իրականացնել ԱՀՈՒ կազմակերպման նպատակով, սակայն չի կարող վաճառել արտադրված ապրանքը:

<sup>18</sup> Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի հունիսի 20-ի «Հայաստանի Հանրապետության միջին մասնագիտական պետական ուսումնական հաստատությունները վերակազմակերպելու և Հայաստանի Հանրապետության միջին մասնագիտական պետական ուսումնական հաստատության օրինակելի կանոնադրությունը հաստատելու մասին» N 1009-Ն որոշում, հավելված 2, հոդված 11:

<sup>19</sup> Նույն տեղում, հոդված 75:

Վերջերս Ազգային ժողովի կողմից ընդունված Մասնագիտական կրթության մասին նոր օրենքը ներառում է կարգավորումներ, որոնք ՄԿՈԻ հաստատություններին թույլատրում են վաճառել ձեռնարկատիրական գործունեության արդյունք ապրանքները և ծառայությունները:

ՀՀ կառավարության որոշմամբ սահմանված ձեռնարկատիրական գործունեության տեսակներից բացի, ՆՄԿՈԻ հաստատությունը իրավունք ունի ստեղծել տնտեսական ընկերություններ կամ դառնալու դրանց մասնակից<sup>20</sup>:

Մասնագիտական կրթության մասին նոր օրենքի շրջանակում պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին ՀՀ օրենքում իրականացված փոփոխությունները մեծացնում են դասավանդվող մասնագիտությունների ոլորտներում ապրանքների արտադրության և ծառայությունների մատուցման նպատակով ՄԿՈԻ հաստատությունների կողմից առևտրային ընկերությունների ստեղծման հնարավորությունները:


ՀՀ օրենսդրությամբ առևտրային կազմակերպություն հանդիսացող իրավաբանական անձինք կարող են ստեղծվել տնտեսական ընկերակցությունների (լիակատար և վստահության հիման վրա հիմնված ընկերություններ), ընկերությունների (սահմանափակ կամ լրացուցիչ պատասխանատվությամբ և բաժնետիրական ընկերություններ) կամ կոոպերատիվների (առևտրային և ոչ առևտրային կոոպերատիվներ) ձևով:

<sup>20</sup> Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգիրք: ՀՀ Ազգային ժողով, ՀՕ-239, հոդված 52:

## Հավելված 1. Որակավորումների ազգային շրջանակը Հայաստանում

Level	Qualification	Education degree (level), the programme	Duration
1st	CERTIFICATE OF ELEMENTARY EDUCATION	1st level of Secondary Education	4 years
2nd	CERTIFICATE OF BASIC EDUCATION	2nd level of Secondary Education	5 years
3rd	CRAFTSMAN (with basic education) (Certificate of Master training qualification)	Preliminary Vocational (Craftsmanship) Educational Programme	6 months to 1 year
4th	1. CERTIFICATE (“Attestat”) OF SECONDARY EDUCATION	3rd level of Secondary Education – senior school	3 years
	2. CRAFTSMAN (with secondary education) (Diploma of Craftsmanship Education)	Preliminary Vocational (Craftsmanship) Educational Programme	1-3 years
5th	SPECIALIST (Diploma of Middle Vocational Education)	Middle Vocational Educational Programme	2-5 years
6th	BACHELOR (Bachelor Diploma)	Bachelor’s Educational Programme	Minimum 3 years
7th	MASTER (Master Diploma)	Master’s Educational Programme	Minimum 1 year
	SPECIALIST WITH DIPLOMA (Diploma of Specialist with Diploma)	Bachelor’s Educational Programme of Specialist with Diploma	Minimum 5 years
8th	(Certificate of PhD)	Post-graduate Professional Educational Programme	Minimum 3 years

Հավելված 2. Կրթության համակարգը Հայաստանում



### **Հավելված 3. ՄԿՈՒ պետական կրթության չափորոշի համառոտ կառուցվածքը հայաստանում**

ՄԿՈՒ պետական կրթական չափորոշիչը նորմատիվ փաստաթուղթ է, որը սահմանում է կրթական ծրագրերի պարտադիր նվազագույն բովանդակությունը, ուսանողների կրթական ծանրաբեռնվածության առավելագույն ծավալը և շրջանավարտներին ներկայացվող որակական պահանջները:

ՄԻՋԻՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ

ԿՐԹՈՒԹՅԱՆ «ԱՆԱՍՆԱԲՈՒԺՈՒԹՅՈՒՆ» ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ

ԿՐԹԱԿԱՆ ՉԱՓՈՐՈՇԻՉ

ԳԼՈՒԽ 1.

ՄԻՋԻՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ

«ԱՆԱՍՆԱԲՈՒԺՈՒԹՅՈՒՆ» ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

1. Սույն ստանդարտը սահմանում է ՀՀ կրթության որակավորման ազգային շրջանակի 5-րդ մակարդակի ՄԿՈՒ «Անասնաբուժություն» որակավորման պահանջները, հանրակրթական ծրագրի ուսանողների պարտադիր նվազագույն, նվազագույն և առավելագույն կրթական ծանրաբեռնվածությունը:
2. Միջին մասնագիտական կրթության «Անասնաբուժություն» մասնագիտության հիմնական կրթական ծրագիրը կարող է իրականացվել հետևյալ ձևերով՝
  - 1) առկա,
  - 2) հեռակա,
  - 3) դրսեկություն (էքստեռնատ):
3. Միջին մասնագիտական կրթության «Անասնաբուժություն» մասնագիտության հիմնական կրթական ծրագրի իրականացման համար Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թ. հունվարի 12-ի «Նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության մասնագիտությունների ցանկերը հաստատելու, Հայաստանի Հանրապետության կառավարության 2000թվականի մայիսի 18-ի N 242 որոշման մեջ փոփոխություն կատարելու և

Հայաստանի Հանրապետության կառավարության մի շարք որոշումներ ուժը կորցրած ճանաչելու մասին» N 73-Ն որոշմամբ սահմանվում են ուսումնառության հետևյալ նորմատիվային ժամկետները.

1) կրթության առկա ձևով

ա. միջնակարգ (լրիվ) կրթության հիմքով 3 տարի

բ. հիմնական ընդհանուր կրթության հիմքով 4 տարի

2) կրթության հեռակա ձևով

ա. միջնակարգ (լրիվ) կրթության հիմքով 4 տարի

3) դրսեկության (էքստերնատ) ձևերով ուսուցման տևողությունը համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2007թ. սեպտեմբերի 6-ի «Նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական հիմնական կրթական ծրագրերի հեռավար (դիստանցիոն) և դրսեկությամբ (էքստերնատով) ուսուցման կարգերը հաստատելու մասին» N 1028-Ն որոշմամբ սահմանված կարգի որոշում է ուսումնական հաստատությունը:

4. Միջին մասնագիտական կրթության «Անասնաբուժություն» մասնագիտության հիմնական կրթական ծրագիրը միջնակարգ (լրիվ) ընդհանուր կրթության հիմքով յուրացնող ուսանողի ուսումնական բեռնվածության նվազագույն ծավալը 4032 ժամ է, առավելագույն ծավալը՝ 6642 ժամ: Հիմնական ընդհանուր կրթության հիմքով հիմնական կրթական ծրագրի յուրացման դեպքում ուսումնառության տևողությունն ավելանում է 52 շաբաթով:

## ԳԼՈՒԽ 2.

ՄԻՋԻՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ «ԱՆԱՍՆԱԲՈՒԺՈՒԹՅՈՒՆ»

ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱԲ ՄԱՍՆԱԳԵՏԻ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ

ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

5. Միջին մասնագիտական կրթության «Անասնաբուժություն» մասնագիտությամբ մասնագետն իրականացնում է հետևյալ զբաղմունքները՝

1) իրականացնում է խորհրդատվական, ախտորոշման, բուժման, կանխարգելման, ախտահանության աշխատանքներ,

2) օգնում է բժիշկ անասնաբույժին՝ նախապատրաստելով սարքերը և համապատասխան նյութերը՝ բուժման աշխատանքների ժամանակ,

3) նախապատրաստում է կենդանիներին բուժման կամ ստուգման իրականացման համար, ինչպես նաև ապահովում է դեղանյութերի և կենսապատրաստուկների պահպանումը համապատասխան ռեժիմներում:

6. Միջին մասնագիտական կրթության «Անասնաբուժություն» մասնագիտությամբ մասնագետի՝ զբաղմունքների ոլորտում մասնագիտական պարտականություններն են.

1) կատարել կենդանիների նախնական կլինիկական հետազոտություն, առաջնային բուժում և նախապատրաստում հետագա գործողություններին, ինչպես նաև իրականացնել հղիության որոշում և ծննդոգնություն,

2) կատարել աշխատանքներ ինֆեկցիոն, ինվազիոն և ոչ ինֆեկցիոն հիվանդությունների կանխարգելման և դրանց առաջացման դեպքում տարածումը կանխելու համար,

3) կատարել անասնաշենքի, հարակից տարածքների, վիրահատարանի ախտահանություն, մակաբուժագերծում, վիրաբուժական նյութերի և այլ սարքավորումների վարակագերծում,

4) պահպանել դեղանյութերը, ախտահանիչ նյութերը և կենսապատրաստուկները,

5) կատարել կենդանիների դիսպանսերացում, համարակալում, անասնաբուժական փաստաթղթերի ու մատյանների լրացում,

6) կատարել կենդանիների տարբեր սեռահասակային խմբերի և հիվանդ կենդանիների խնամքի և պահվածքի համար անհրաժեշտ գոռհիգիենիկ և բուժիչ միջոցառումներին վերաբերող աշխատանքներ,

7) կատարել ախտաբանական նմուշների հավաքում, կոնսերվացում և ուղարկում ստուգման համար համապատասխան լաբորատորիաներ, դրա համար անհրաժեշտ ուղորդող գրությունների լրացում:

### ԳԼՈՒԽ 3.

#### ԸՆԴՀԱՆՈՒՐ ՊԱՀԱՆՋՆԵՐ ՄԻՋԻՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ «ԱՆԱՍՆԱԲՈՒԺՈՒԹՅՈՒՆ» ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ

7. Միջին մասնագիտական կրթության «Անասնաբուժություն» մասնագիտության հիմնական կրթական ծրագիրը շրջանավարտի համար պետք է ապահովի՝

1) մասնագիտական գործունեության բնագավառի կարողություններն ու հմտությունները ձեռք բերելու համար պահանջվող ծավալով տեսական ու գործնական գիտելիքների յուրացում,

- 2) աշխատանքային և մասնագիտական պարտականությունները կատարելու ընթացքում աշխատանքային կոլեկտիվի անդամների և ղեկավարների հետ հաղորդակցվելու, մասնագիտական և ընդհանուր բնույթի հարցեր ներկայացնելու, դրանք պարզաբանելու կարողության ձևավորում,
- 3) ինչպես տիպական, այնպես էլ որոշակի փոփոխվող գործոններով իրավիճակներում մասնագիտական հարցերի լուծումների տարբերակներ առաջարկելու համար անհրաժեշտ կարողությունների ձևավորում,
- 4) մասնագիտական խնդիրների լուծման համար անհրաժեշտ փաստերը և տեղեկատվությունը որոշակի սոցիալական և էթիկական հարցերի հետ որպես մեկ ամբողջություն դիտարկելու, ակտիվ քաղաքացիական գիտակցության դրսևորման կարողության ձևավորում,
- 5) մասնագիտական գործունեության գործառնությունները կիրառվող նորմաների սահմաններում իրականացնելու հմտությունների ձևավորում,
- 6) ինքնագարգացման և մասնագիտական կատարելագործման նպատակով իր և աշխատակիցների ուսումնառության կարիքները գնահատելու, դրանք իրագործելու ուղիներն առաջարկելու կարողության ձևավորում,
- 7) մասնագիտական և ընդհանուր բնույթի տեղեկատվության գոյություն ունեցող աղբյուրներից օգտվելու, անհրաժեշտ տեղեկատվությունը ձեռք բերելու կարողության ձևավորում,
- 8) աշխատանքային խմբի գործունեությունը կազմակերպելու, խմբի անդամներին ուղղորդելու, նրանց անհատական հնարավորությունները գնահատելու և արդյունավետ օգտագործելու հմտությունների զարգացում,
- 9) ընթացիկ մասնագիտական խնդիրների լուծման ժամանակ ռազմավարական մոտեցումների տարրեր կիրառելու կարողությունների ձևավորում:

#### **ԳԼՈՒԽ 4.**

**ՊԱՀԱՆՁՆԵՐ «ԱՆԱՍՆԱԲՈՒԺՈՒԹՅՈՒՆ» ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ  
ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅԱՆ ՊԱՐՏԱԴԻՐ ՆՎԱՉԱԳՈՒՅՆԻ  
ՆԿԱՏՄԱՍԲ**

8. Միջին մասնագիտական կրթության «Անասնաբուժություն» մասնագիտության հիմնական կրթական ծրագիրն ընդհանուր հումանիտար և սոցիալ-տնտեսագիտական գիտելիքների բնագավառում շրջանավարտի համար պետք է ապահովի՝

- 1) իմանալ ՀՀ Սահմանադրության, տվյալ բնագավառի աշխատանքները, մարդու և հասարակության, քաղաքացիների միջև հարաբերությունները կարգավորող օրենքների և նորմատիվ փաստաթղթերի հիմնական դրույթները,
- 2) տիրապետել հայոց լեզվին,
- 3) հաղորդակցվել երկու օտար լեզուներով,
- 4) պատկերացում ունենալ առողջ կենսակերպի մասին, տիրապետել ֆիզիկական կատարելագործման ունակություններին և հմտություններին,
- 5) դրսևորել ազգային և համաշխարհային պատմության և մշակույթի որոշակի իմացություն,
- 6) պատկերացում ունենալ անձի և հասարակության զարգացման օրինաչափությունների, հասարակության սոցիալական կառուցվածքի, շարժումների, քաղաքականության սուբյեկտների, քաղաքական հարաբերությունների և գործընթացների մասին,
- 7) իմանալ հոգեբանության, միջանձնային փոխհարաբերությունների վարվելակերպի տարրերը,
- 8) իմանալ տնտեսագիտության տեսության հիմնադրույթները, մակրոտնտեսության և միկրոտնտեսության օրենքները, անցումային շրջանի տնտեսության առանձնահատկությունները:

9. Միջին մասնագիտական կրթության «Անասնաբուժություն» մասնագիտության հիմնական կրթական ծրագիրը մաթեմատիկական և ընդհանուր բնագիտական գիտելիքների բնագավառում շրջանավարտի համար պետք է ապահովի՝

- 1) ծանոթ լինել էկոլոգիական հիմնական հասկացություններին, բնապահպանական գրքայի և տարածաշրջանային հիմնախնդիրներին,
- 2) պատկերացում ունենալ արտակարգ իրավիճակների մասին, տիրապետել արտակարգ իրավիճակներում գործելու սկզբունքներին, ծանոթ լինել փրկարարական աշխատանքների կազմակերպման կառույցներին և փրկարարական տեխնիկային, կարողանալ օգտագործել անհատական պաշտպանության միջոցներ:

10. Միջին մասնագիտական կրթության «Անասնաբուժություն» մասնագիտության հիմնական կրթական ծրագիրը պետք է ըստ աղյուսակ 1-ում բերված մոդուլների ապահովի շրջանավարտի կողմից առանցքային հմտություններին տիրապետում:

11. Միջին մասնագիտական կրթության «Անասնաբուժություն» մասնագիտության հիմնական կրթական ծրագիրը շրջանավարտի համար պետք է ըստ աղյուսակ 2-ում բերված մոդուլների ապահովի ընդհանուր մասնագիտական և հատուկ մասնագիտական կարողությունների ձեռքբերում:

### **ԳԼՈՒԽ 5.**

#### **ՊԱՀԱՆՁՆԵՐ ՄԻՋԻՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ**

#### **ԿՐԹՈՒԹՅԱՆ «ԱՆԱՍՆԱԲՈՒԺՈՒԹՅՈՒՆ» ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ**

#### **ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ**

12. Միջին մասնագիտական կրթության «Անասնաբուժություն» մասնագիտության հիմնական կրթական ծրագիր իրականացնող հաստատության կադրային ապահովության և կադրային համապատասխանության նկատմամբ սահմանվում են հետևյալ պահանջները.

1) Միջին մասնագիտական կրթության «Անասնաբուժություն» մասնագիտությամբ մասնագետի պատրաստման հիմնական կրթական ծրագիր իրականացնող հաստատություններում ուսումնական գործընթացն իրականացնում են մանկավարժական և ուսումնաօժանդակ անձնակազմի աշխատողները:

2) Հաստատության մանկավարժական աշխատողների կազմում ընդգրկվում են դասախոսներ, արտադրական ուսուցման վարպետներ: Դասախոսական անձնակազմի աշխատողները, որպես կանոն, պետք է ունենան իրենց կողմից ուսուցանվող դասընթացի գծով բարձրագույն մասնագիտական կրթություն: Հատուկ մասնագիտական դասընթացները պարապող դասախոսների համար մասնագիտական աշխատանքի փորձի առկայությունը ցանկալի է:

3) Ուսումնական պրակտիկան վարող արտադրական ուսուցման վարպետը կարող է ունենալ ինչպես բարձրագույն մասնագիտական, այնպես էլ միջին մասնագիտական կրթություն, մասնագիտական աշխատանքի փորձ: Առանձին մասնագիտությունների գծով ուսումնական պրակտիկան կամ նրա որոշակի մասերը կարող է վարել նաև

արհեստագործական կրթություն և բավարար մասնագիտական որակավորում ունեցող արհեստավորը:

4) Արտադրական և նախաավարտական պրակտիկաները վարում է մասնագիտական դասընթացի դասախոսը:

13. Միջին մասնագիտական կրթության «Անասնաբուժություն» մասնագիտության հիմնական կրթական ծրագիր իրականացնող հաստատության ուսումնամեթոդական ապահովության նկատմամբ սահմանվում են հետևյալ պահանջները.

1) Միջին մասնագիտական կրթության «Անասնաբուժություն» մասնագիտության հիմնական կրթական ծրագրի իրականացումը պետք է ապահովված լինի ուսանողի համար մատչելի տեղեկատվական նյութերով (գրադարանային ֆոնդ, տվյալների համակարգչային բազա), ինչն, ըստ բովանդակության պետք է համապատասխանի մասնագիտության ուսումնական պլանով նախատեսված առարկաների և մոդուլների լրիվ ցանկին: Այդ առարկաների և մոդուլների, ինչպես նաև ուսումնական գործընթացի կազմակերպման բոլոր ձևերի գծով (տեսական, գործնական պարապմունքների, ուսումնական, արտադրական և նախաավարտական պրակտիկաների, կուրսային և դիպլոմային աշխատանքների) պետք է առկա լինեն դասագրքեր, ուսումնամեթոդական, մեթոդական ձեռնարկներ, ուղեցույցեր, գործնական խաղերի սցենարներ, թեստային հանձնարարականների հավաքածուներ, ալգորիթմներ, մեթոդական մշակումներ, ցուցումներ, երաշխավորություններ, տեղեկատվական գրականություն, դիտողական նյութեր, ուսուցման տեխնիկական միջոցներ, ինչպես նաև միջանկյալ և ամփոփիչ ատեստավորման նյութեր:

14. Միջին մասնագիտական կրթության «Անասնաբուժություն» մասնագիտության հիմնական կրթական ծրագիր իրականացնող կազմակերպության նյութատեխնիկական ապահովության նկատմամբ սահմանվում են հետևյալ պահանջները.

1) Ուսումնական կաբինետների երաշխավորվող ցանկը՝

ա. անատոմիա,

բ. դեղաբանություն,

գ. ծննդագիտություն,

դ. վիրաբուժություն,

ե. համաճարակաբանություն և մակաբուժաբանություն:

2) Ուսումնական լաբորատորիաների երաշխավորվող ցանկը՝

- ա. ֆիզիոլոգիայի,
- բ. մանրէաբանական,
- գ. վիրաբուժական,
- դ. ծննդագիտության և արհեստական սերմնավորման:

3) Սպորտային համալիր՝

- ա. մարզադահլիճ,
- բ. մարզահրապարակ:

Կրթական ծրագիր իրականացնող կազմակերպությունը, ելնելով անհրաժեշտությունից, կարող է ձևավորել լրացուցիչ կաբինետներ, լաբորատորիաներ, արհեստանոցներ:

15. Միջին մասնագիտական կրթության «Անասնաբուժություն» մասնագիտության հիմնական կրթական ծրագրով ուսումնական գործընթացի կազմակերպման նկատմամբ սահմանվում են հետևյալ պահանջները.

1) Ուսանողի շաբաթական ուսումնական բեռնվածության առավելագույն ծավալը չպետք է գերանցանցի 54 ժամը՝ ներառյալ լսարանային և արտալսարանային ուսումնական աշխատանքի բոլոր տեսակները:

2) Ուսումնառության ընթացքում ուսանողի բեռնվածությունը պարտադիր լսարանային պարապմունքներով չպետք է գերազանցի շաբաթական 36 ժամը, ինչը նաև ուսումնական բեռնվածության նվազագույն ծավալն է, ընդ որում՝ նշված ծավալը չի ներառում նախասիրական առարկաների պարապմունքները, խորհրդատվությունները և լրացուցիչ արտալսարանային պարապմունքները:

3) Ուսումնական խմբի համար սահմանվում են խորհրդատվության ժամեր յուրաքանչյուր ուսումնական տարում մինչև 100 ժամ:

4) Ուսումնական տարվա սկիզբը և ավարտը բոլոր կուրսերում որոշվում է ուսումնական պլաններով:

5) Նախասիրական առարկաների ցանկը, դրանց ծավալը (ոչ ավել, քան շաբաթական 4 ժամ՝ առանձին դասացուցակով) և ուսուցման ժամկետները յուրաքանչյուր ուսումնական տարում որոշվում է հաշվի առնելով ուսանողների ընտրությունը:

6) Հեռակա ձևով ուսուցման դեպքում ուսումնական տարվա ընթացքում դասախոսների հետ ուսանողների պարապմունքների ծավալը պետք է կազմի ոչ պակաս, քան 160 ժամ:

18. Միջին մասնագիտական կրթության «Անասնաբուժություն» մասնագիտության հիմնական կրթական ծրագրի պրակտիկաների կազմակերպման նկատմամբ սահմանվում են հետևյալ պահանջները.

1) Միջին մասնագիտական կրթության «Անասնաբուժություն» մասնագիտության հիմնական կրթական ծրագրի որոշակի մասի ուսուցումն իրականացվում է ուսումնական (տեսական ուսուցմամբ և/կամ առանց տեսական ուսուցման), արտադրական և նախաավարտական պրակտիկաների ձևով: Պրակտիկաների ընթացքում ուսանողները կատարելագործում են իրենց գործնական հմտությունները:

2) Պրակտիկայի տևողությունը սահմանվում է մասնագիտության ուսումնական պլանով:

3) Պրակտիկաների ուսումնական ծրագրերը կազմում և հաստատում են ուսումնական հաստատությունները:

4) Պրակտիկաների անցկացումը վարում են արտադրական ուսուցման վարպետները, դասախոսները:

5) Ուսումնական պրակտիկաներն անց են կացվում պրակտիկայի ծրագրի կատարումն ապահովելու համար բավարար կահավորում ու տեխնիկական հագեցում ունեցող ուսումնական, ուսումնա-արտադրական արհեստանոցներում, ուսումնական տնտեսություններում, ուսումնավորձնական տեղամասերում, ուսումնական հաստատության այլ ուսումնասօժանդակ օբյեկտներում, ինչպես նաև արտադրական կազմակերպություններում, հաստատություններում :

6) Արտադրական և նախաավարտական պրակտիկաները, որպես կանոն, անց են կացվում պրակտիկաների ուսումնական ծրագրերի բովանդակությանը համապատասխան պայմաններ ունեցող կազմակերպություններում:

19. Միջին մասնագիտական կրթության «Անասնաբուժություն» մասնագիտության հիմնական կրթական ծրագիրն իրականացնելու ընթացքում ուսանողների միջանկյալ և ամփոփիչ ատեստավորումների նկատմամբ սահմանվում են հետևյալ պահանջները.

1) Միջին մասնագիտական կրթության «Անասնաբուժություն» մասնագիտության հիմնական կրթական ծրագրով ուսուցման ընթացքը վերահսկելու և արդյունքների ձեռքբերումը գնահատելու նպատակով անց է կացվում ուսանողների միջանկյալ ատեստավորում, իսկ որակավորում շնորհելու համար՝ շրջանավարտների պետական ամփոփիչ ատեստավորում:

- 2) Միջանկյալ ատեստավորում կարող է անցկացվել ինչպես ուսումնական կիսամյակի ընթացքում այնպես էլ վերջում:
- 3) Ուսումնական կիսամյակի սկզբում ուսանողը տեղեկացվում է կիսամյակի ընթացքում միջանկյալ ատեստավորման բնույթի, ներառվող նյութի ծավալի և ժամկետների մասին:
- 4) Միջանկյալ ատեստավորման համար ընտրված ուսումնական նյութը չի կարող ավելին լինել երկու անընդմեջ կիսամյակների նյութից:
- 5) Շրջանավարտների պետական ամփոփիչ ատեստավորումը երաշխավորվում է անց կացնել առանձին առարկաներից կամ մոդուլներից քննության, համալիր (միջառարկայական կամ միջմոդուլային) քննության կամ ավարտական (դիպլոմային) աշխատանք կատարելու և պաշտպանելու ձևով:
- 6) Պետական ամփոփիչ ատեստավորման ընտրված ձևը և ներառվող նյութի ծավալը պետք է հնարավորություն տա համոզվել սույն չափորոշչով «Անասնաբուժություն» մասնագիտությամբ մասնագետի համար սահմանված պահանջներին շրջանավարտի համապատասխանության մեջ:

## **ԳԼՈՒԽ 6.**

### **ՄԻՋԻՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ**

#### **ԿՐԹՈՒԹՅԱՆ «ԱՆԱՍՆԱԲՈՒԺՈՒԹՅՈՒՆ» ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՕՐԻՆԱԿԵԼԻ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՊԼԱՆԸ ԵՎ ՆՐԱ ՊԱՐԶԱԲԱՆՈՒՄՆԵՐԸ**

18. Միջին մասնագիտական կրթության «Անասնաբուժություն» մասնագիտության հիմնական կրթական ծրագիրն իրականացվում է համաձայն աղյուսակ 3-ում բերված օրինակելի ուսումնական պլանի.
19. Միջին մասնագիտական կրթության «Անասնաբուժություն» մասնագիտության հիմնական կրթական ծրագիրն իրականացնող կազմակերպությունը օրինակելի ուսումնական պլանը կիրառելիս՝
  - 1) սույն չափորոշչով սահմանված օրինակելի ուսումնական պլանի հիման վրա կազմում և հաստատում է աշխատանքային ուսումնական պլանը,
  - 2) աշխատանքային ուսումնական պլանը կազմելիս կարող է մինչև 5% չափով փոփոխել դասընթացների և մոդուլների ժամաքանակը,
  - 3) կարող է փոփոխել առանձին առարկաների և մոդուլների ծրագրային նյութի բովանդակությունը 15%-ի սահմաններում՝ չփոփոխելով արդյունքները և կատարման չափանիշները,

- 4) առարկայի և /կամ/ մոդուլի ընդհանուր ժամաքանակի սահմաններում որոշում է տեսական, գործնական և լաբորատոր պարապմունքների ժամաքանակները,
- 5) պրակտիկայի համար նախատեսված շաբաթների սահմաններում որոշում է ուսումնական և արտադրական պրակտիկաների տևողությունները, անցկացման ժամկետները, նախաավարտական պրակտիկայի տևողությունը,
- 6) մասնագիտական առարկաների և մոդուլների ուսումնական ծրագրերը կազմելիս հաշվի է առնում գործատուների, գործադիր իշխանությունների, մասնագիտական ոլորտը կառավարող պետական լիազորված մարմինների, այլ շահագրգիռ սուբյեկտների (սոցիալական գործընկերների) առաջարկությունները,
- 7) ընտրում է շրջանավարտների՝ սույն չափորոշչով երաշխավորված ամփոփիչ ատեստավորման ձևերից մեկը:

**Հավելված 4. «Անասնաբուժություն» մասնագիտության երաշխավորված ուսումնական պլան**

N	Առարկաների անվանումը և մոդուլները	Ատեստավորում ըստ կիսամյակների			Ուսանողի ուսումնական բեռնվածությունը (ժամ)			Առարկաների անվանումը և մոդուլները								
		Քնն.	Ստուգարք	Կուրս աշխ.	Քնն.			1-ին կուրս		2-րդ կուրս		3-րդ կուրս		4-րդ կուրս		
					Ընդամենը	Այդ թվում			1-ին կիս	2-րդ կիս	3-րդ կիս	4-րդ կիս	5-րդ կիս	6-րդ կիս	7-րդ կիս	8-րդ կիս
						Տես. ուսուց.	Տես. ուսուց.	Տես. ուսուց.			13 շաբ	13 շաբ	13 շաբ	13 շաբ	13 շաբ	13 շաբ
<b>1.</b>	<b>ԸՆԴՀԱՆՈՒՐ ՀՈՒՄԱՆԻՏԱՐ ԵՎ ՍՈՑԻԱԼ ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ</b>															
1.	Հայոց լեզվի և խոսքի մշակույթի հիմունքներ		4d		72	54	18				52	20				
2.	Տնտեսագիտության հիմունքներ		4d		54	30	24				26	28				
3.	Քաղաքագիտություն և սոցիոլոգիայի հիմունքներ		4d		54	38	16				32	22				

4.	Իրավունքի հիմունքներ		5d		36	20	16						36			
5.	Պատմություն		4d		54	34	20				26	28				
6.	Ռուսաց լեզու		6d		72	12	60						36	36		
7.	Օտար լեզու		6d		72	16	56						36	36		
8.	Ֆիզիկական կուլտուրա		3,4,5 ,6,7, 8d		148	12	136				26	26	26	26	26	18
9.	<b>ԸՆԴԱՄԵՆԸ</b>		6d		36	20	16							36		
10.	<b>ՄԱԹԵՄԱՏԻԿԱԿԱՆ ԵՎ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆԱԳԻՏԱԿԱՆ</b>		5d		28	26	2						28			
	Էկոլոգիայի հիմունքներ				<b>626</b>	<b>262</b>	<b>364</b>				<b>162</b>	<b>124</b>	<b>162</b>	<b>134</b>	<b>26</b>	<b>18</b>
2.	Քաղաքացիական պաշտպանություն և արտակարգ իրավիճակների հիմնահարցեր															
1.	<b>ԸՆԴԱՄԵՆԸ</b>		6d		36	10	26							36		
2.	<b>ԱՌԱՆՑՔԱՅԻՆ ՀՄՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ</b>		6d		36	12	24							36		
3.	Աշխատանքի անվտանգություն և առաջին օգնություն		6d		36	4	32							36		
	Հաղորդակցություն				<b>108</b>	<b>26</b>	<b>80</b>							<b>108</b>		

<b>3.</b>	Համակարգչային օպերատորության հիմունքներ														
1.	<b>ԸՆԴԱՄԵՆԸ</b>		3d		54	16	38				54				
2.	<b>ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ</b>		3d		72	20	52				72				
3.	Կենդանիների մաշկի և դրա ածանցյալների կառուցվածքը և ֆիզիոլոգիան		3d		72	24	48				72				
4.	Կենդանիների հենաշարժիչ համակարգի կառուցվածքը և ֆիզիոլոգիան		3d		36	10	26				36				
5.	Կենդանիների ներքին օրգանների կառուցվածքը և ֆիզիոլոգիան		3d		36	12	24				36				
6.	Արյունատար համակարգի կառուցվածքը և ֆիզիոլոգիան		3d		36	12	24				36				
7.	Նյարդային համակարգի և ներքին սեկրեցիայի գեղձերի կառուցվածքը և ֆիզիոլոգիան	4	4d		72	40	32				72				
	Լատիներեն լեզու				<b>378</b>	<b>140</b>	<b>238</b>				<b>306</b>	<b>72</b>			
<b>4.</b>	Դեղանյութերի ընդհանուր խմբերի ազդեցությունը և դրանց փոխազդեցությունը														

1.	<b>ԸՆԴԱՄԵՆԸ</b>	4			54	18	36					54				
2.	<b>ՀԱՏՈՒԿ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ</b>		4d		54	18	36					54				
3.	Վարակիչ հիվանդությունների առաջացման պատճառները և տարածման ուղիները		4d		36	12	24					36				
4.	Մակարոձային հիվանդությունների առաջացման պատճառները և տարածման ուղիները		4d		54	16	38					54				
5.	Ոչ վարակիչ հիվանդությունների կանխարգելումը և բուժումը		4d		72	24	48					72				
6.	Բուժ կանխարգելիչ միջոցառումների իրականացումը ինֆեկցիոն հիվանդությունների դեմ	5			72	24	48						72			
7.	Բուժ կանխարգելիչ միջոցառումների իրականացումը մակարոձային հիվանդությունների դեմ		5d		54	12	42						54			
8.	Ախտահանություն և վարակազերծում		8d		36	8	28									36
9.	Կենդանիների ֆիքսում և տապալում		5d		72	20	52						72			

10.	Զոոհիգիենիկ ընդհանուր պահանջներ		5d		36	12	24						36			
11.	Հիվանդ կենդանիների բուժման ընթացքում կերակրում և խնամք	5			72	24	48						72			
12.	Կենդանիների կլինիկական հետազոտում և դիսպանսերացում	6			36	10	26							36		
13.	Դեղապատրաստուկների ներմուծման եղանակները		6d		36	12	24							36		
14.	Լաբորատոր ախտորոշման նպատակով նմուշների հավաքում		6d		36	8	28							36		
15.	Անասնաբուժական գրանցամատյաններ, փաստաթղթեր և դրոշմներ		6d		54	18	36							54		
16.	Դեղանյութերի, ախտահանիչների և կենսապատրաստուկների իմացություն և պահպանում		7		72	36	36								72	
17.	Հղիության որոշում և ծննդօգնություն		7d		36	12	24								36	
18.	Արհեստական սերմնավորում		6d		54	14	40							54		
19.	Այրվածքներ, մեխանիկական վնասվածքներ և կոտրվածքների բուժում		7d		54	12	42								54	

20.	Կենդանիների մատղաշի պահվածքի և խնամքի առանձնահատկությունները		7d		54	18	36								54	
21.	Կենդանիների մատղաշի յուրահատուկ հիվանդությունների բուժում		7d		36	12	24								36	
22.	Թռչունների հիվանդություններ		7d		36	12	24								36	
23.	Ձկների հիվանդություններ		7		72	24	48								72	
24.	Դեկորատիվ և մորթատու կենդանիների հիվանդություններ		7d		36	10	26								36	
25.	Մեղուների հիվանդություններ		7d		36	8	28								36	
26.	<b>ԸՆԴԱՄԵՆԸ</b>		8d		36	12	24									36
27.	<b>ԸՆՏՐՈՎԻ</b>		8d		72	22	50									72
	<b>ՊԱՀՈՒՄՏԱՅԻՆ ԺԱՄԵՐ</b>				<b>1368</b>	<b>428</b>	<b>940</b>					<b>270</b>	<b>306</b>	<b>216</b>	<b>432</b>	<b>144</b>
<b>5.</b>	<b>ԸՆԴԱՄԵՆԸ</b>				<b>84</b>											<b>84</b>
	<b>ԽՈՐՀՐԴԱՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ</b>				<b>100</b>							<b>2</b>		<b>10</b>	<b>10</b>	<b>78</b>
	<b>ՆԱԽԱՍԻՐԱԿԱՆ ԱՌԱՐԿԱՆԵՐ</b>										<b>468</b>	<b>468</b>	<b>468</b>	<b>468</b>	<b>468</b>	<b>324</b>
					<b>300</b>											

Շարաթների քանակ									36	36	36	36	36	36	36	36	
<b>IV. ՆԱԽԱՍԻՐԱԿԱՆ ԱՌԱՐԿԱՆԵՐ</b>				<b>N</b>	<b>VII. ԱՆՀՐԱՃԵՇՏ ԿԱԲԻՆԵՏՆԵՐԻ, ԼԱԲՈՐԱՏՈՐԻԱՆԵՐԻ ԵՎ ԱՐՀԵՍՏԱՆՈՑՆԵՐԻ ՑԱՆԿԸ ԿԱԲԻՆԵՏՆԵՐ</b>												
1.	Հոգեբանություն			1.	մարդասիրական առարկաներ												
2.	Խորհրդատվական ծառայությունների մատուցման ձևերն ու մեթոդները			2.	օտար լեզուներ												
				3.	սոցիալ-տնտեսական առարկաներ												
				4.	համակարգիչ												
	<b>V. ՊՐԱԿՏԻԿԱ</b>	Կիսամյակ	Շաբաթ	5.	անատոմիայի												
1.	Ուսումնական պրակտիկա առանց տեսական ուսուցման	3,4,5,6,7, 8	4,8,4,8,4, 6	6.	վիրահատության												
2.	Նախաավարտական, արտադրական (մասնագիտական) պրակտիկա	8	4														
3.																	
	<b>TOTAL</b>																
<b>VI. ՈՒՍՈՒՄՆԱՌՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԱՄՓՈՓԻՉ ՍՏՈՒԳՈՒՄ</b>					<b>ԼԱԲՈՐԱՏՈՐԻԱՆԵՐ</b>												
Հունիսի 22-ից հուլիսի 05-ի շրջանում					1.	Ֆիզիոլոգիա											
					2.	մանկաբարձություն և արհեստական բեղմնավորում											

Երկու համալիր պետական քննություն՝ ընդհանուր մասնագիտական և		<b>ՄԱՐԶԱԿԱՆ ՀԱՄԱԼԻՐ</b>
հատուկ մասնագիտական մոդուլներից	1.	Մարզադահլիճ
	2.	Մարզահրապարակ

## Հավելված 5. Հաստատության ուսանողների շարժը վերջին 3 տարվա ընթացքում

Մասնագիտությունը, /Որակավորումը/	Ուսանողների թիվը			
		2022	2023	2024
	<i>կանայք</i>			
Փոխադրումների կազմակերպում և կառավարում տրանսպորտում որակավորումը՝ Տեխնիկ կարգավար տրանսպորտում	Ընդամենը	65	63	59
	կանայք	5	5	6
Անասնաբուժություն Որակավորումը՝ Կրտսեր անասնաբույժ	Ընդամենը	35	28	20
	կանայք	8	8	4
Հաշվապահական հաշվառում որակավորումը՝ Հաշվապահ	Ընդամենը	59	64	46
	կանայք	39	46	24
Մենեջմենթ Որակավորումը՝ Մենեջեր	Ընդամենը	45	46	65
	կանայք	25	25	30
Կաթի և կաթնամթերքի տեխնոլոգիա Որակավորումը՝ Տեխնոլոգ՝ կաթի և կաթնամթերքի արտադրության	Ընդամենը	68	65	49
	կանայք	34	33	27
Գյուղատնտեսական մեքենաների և սարքավորումների շահագործում, նորոգում որակավորումը՝ Տեխնիկ՝գյուղ.մեք. և սարք.շահագ. և նորոգում	Ընդամենը	49	47	53
	կանայք	-	-	-
Գյուղացիական /ֆերմերային/ տնտեսության կազմակերպում որակավորումը՝ Անասնապահական ֆերմերային տնտեսության կազմակերպիչ	Ընդամենը	11	9	8
	կանայք	-	-	-
Զբոսաշրջություն Որակավորումը՝ Մասնագետ զբոսաշրջության ծառայությունների	Ընդամենը	12	12	23
	կանայք	8	8	17
<b>Գումարը</b>	<b>Ընդամենը</b>	<b>344</b>	<b>334</b>	<b>313</b>
	<b>կանայք</b>	<b>119</b>	<b>125</b>	<b>108</b>

Ծանոթություն – 2024թ. Ուսանողների թիվը տրված է 01.05.2024թ. դրությամբ

### Հավելված 6. Հաստատության անձնակազմը

	Ընդամենը	Այդ թվում՝					
		Դասավանդում է	Ունի գիտական աստիճան	Բաշխումն՝ ըստ տարիքի			
				մինչև 30	30-45	46-60	60-ից բարձ
Վարչական անձնակազմ	19	15	-	2	8	5	4
<i>այդ թվում՝ կանայք</i>	<i>13</i>	<i>13</i>	-	2	6	3	2
Դասավանդողներ	28	28	-	8	10	3	7
<i>այդ թվում՝ կանայք</i>	<i>20</i>	<i>20</i>	-	8	7	1	4
Օժանդակ (տեխնիկական) անձնակազմ	11	-	-	2	1	5	3
<i>այդ թվում՝ կանայք</i>	<i>4</i>	-	-	-	-	3	1
<b>Ընդամենը</b>	<b>58</b>	<b>43</b>	-	<b>12</b>	<b>19</b>	<b>13</b>	<b>14</b>
<i>այդ թվում՝ կանայք</i>	<i>37</i>	<i>33</i>		<b>10</b>	<b>13</b>	<b>7</b>	<b>7</b>

## Հավելված 7. Տեղեկություններ հողի եվ շենքային պայմանների մասին

Հողի ընդհանուր տարածքը՝ 46720 ք.մ., որից՝  
 մարզահրապարակ 600 ք.մ.,  
 ասֆալտապատ հրապարակ 1600 ք.մ.,  
 ասֆալտապատ ճանապարհ 920 ք.մ.,

Մասնաշենքեր՝

<p><b>1. Նախկին ուսումնական մասնաշենք</b>                  Ընդհանուր մակերեսը՝ <u>993,4</u> ք.մ.      Օգտակար մակերեսը՝ <u>903</u> ք.մ.                  Հարկերի քանակը՝ <u>4</u>      Ծավալը՝ <u>9934</u> խ.մ.                  Կառուցման տարեթիվը՝ <u>1975</u> թ.                  Կիսաքանդ /երկրաժարժի հետևանքով դարձել է վթարային /                  Վիճակը՝ քանդման ենթակա է</p>
<p><b>2. Սպորտ դահլիճ /վթարային կիսաքանդ/</b>                  Ընդհանուր մակերեսը՝ <u>921,3</u> ք.մ.      Օգտակար մակերեսը՝ <u>901,9</u> ք.մ.                  Հարկերի քանակը՝ <u>1</u>      Ծավալը՝ <u>6449</u> խ.մ.                  Կառուցման տարեթիվը՝ <u>1975</u>թ.                  Օգտագործումը՝ չի օգտագործվում                  Վիճակը՝ քանդման ենթակա է</p>
<p><b>3. Ուսումնական մասնաշենք</b>                  Ընդհանուր մակերեսը՝ <u>579</u> ք.մ.      Օգտակար մակերեսը՝ <u>549</u> ք.մ.                  Հարկերի քանակը՝ <u>1</u>      Ծավալը՝ <u>2360</u> խ.մ.                  Կառուցման տարեթիվը՝ <u>1975</u>թ.                  Օգտագործումը՝ անհատույց օգտագործում                  Վիճակը՝ օգտագործվող-կապիտալ վերանորոգման ենթակա</p>
<p><b>4. Կաթսայատուն /կիսաքանդ/</b>                  Ընդհանուր մակերեսը՝ <u>302,6</u> ք.մ.      Օգտակար մակերեսը՝ <u>1296,1</u> ք.մ.                  Հարկերի քանակը՝ <u>1</u>      Ծավալը՝ <u>1210</u> խ.մ.                  Կառուցման տարեթիվը՝ <u>1975</u> թ.</p>

<p>Օգտագործումը՝ չի օգտագործվում  Վիճակը՝ <u>քանդման ենթակա</u></p>
<p><b>5. Կաթսայատուն</b>  Ընդհանուր մակերեսը՝ <u>14,9</u> ք.մ.      Օգտակար մակերեսը՝ <u>149</u> ք.մ.  Հարկերի քանակը՝ <u>1</u>      Ծավալը՝ <u>31</u> խ.մ.  Կառուցման տարեթիվը՝ <u>2006</u>թ.  Օգտագործումը՝ անհատույց օգտագործում  Վիճակը՝ <u>գործող</u>, վերանորոգման ենթակա</p>
<p><b>6. Վարչական շենք</b>  Ընդհանուր մակերեսը՝ <u>385</u> ք.մ.      Օգտակար մակերեսը՝ <u>358</u> ք.մ.  Հարկերի քանակը՝ <u>2</u>      Ծավալը՝ <u>2310</u> խ.մ.  Կառուցման տարեթիվը՝ <u>2004</u> թ.  Օգտագործումը՝ անհատույց օգտագործում  Վիճակը՝ կապիտալ վերանորոգման ենթակա</p>
<p><b>7. Պահակատուն</b>  Ընդհանուր մակերեսը՝ <u>10,84</u> ք.մ.      Օգտակար մակերեսը՝ <u>10,84</u> ք.մ.  Հարկերի քանակը՝ <u>1</u>      Ծավալը՝ <u>14,9</u> խ.մ.  Կառուցման տարեթիվը՝ <u>2008</u>թ. Օգտագործումը՝ անհատույց օգտագործում  Վիճակը՝ <u>նորմալ</u></p>
<p><b>8. Ակումբ փայտյա</b>  Ընդհանուր մակերեսը՝ <u>289</u> ք.մ.      Օգտակար մակերեսը՝ <u>289</u> ք.մ.  Հարկերի քանակը՝ <u>1</u>      Ծավալը՝ <u>867</u> խ.մ.  Կառուցման տարեթիվը՝ <u>1988</u> թ.  Օգտագործումը՝ անհատույց օգտագործում  Վիճակը՝ <u>վթադային</u>, քանդման ենթակա</p>
<p><b>9. Ոսումնական մասնաշենք փայտյա</b>  Ընդհանուր մակերեսը <u>772,4</u> ք.մ      Օգտակար մակերեսը՝ <u>766,4</u> ք.մ.  Հարկերի քանակը՝ <u>2</u>      Ծավալը՝ <u>2317</u> խ.մ.  Կառուցման տարեթիվը՝ <u>1989</u> թ.</p>

Օգտագործումը՝ անհատույց օգտագործում  
 Վիճակը՝ մասնակի օգտագործվող, քանդման ենթակա

**10. Ավտոտնակներ**

Ընդհանուր մակերեսը՝ 238,7 ք.մ. Օգտակար մակերեսը՝ 328,7 ք.մ

Հարկերի քանակը՝ Ծավալը՝ 954 խ.մ.

Կառուցման տարեթիվը՝ 1975 թ.

Օգտագործումը՝ անհատույց օգտագործում

Վիճակը՝ վթարային, քանդման ենթակա/ :